

**«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիր
Փոքր դրամաշնորհների հայտի ձև**

Ծրագրի անվանումը	«Գյումրու հատուկ խնամքի տների և մանկատների շրջանում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման, երեխաների և նրանց ծնողների շահերի և իրավունքների պաշտպանության» ծրագիր
Կոնտակտային անձ և կոնտակտային տվյալներ	Արա Մելիքջանյան Հասցե: ՀՀ, ք. Գյումրի Մուշ 2-2 թաղ. 47 շենք բն. 9 Հեռ: (+374;312)5-33-30; (+374;93)266-436; (+374;41)266-436 Էլ-հասցե: a.melikjanyan@gmail.com ; logosngo@gmail.com
Ծրագրի իրականացման վայրը (մարզ, համայնք)	Շիրակի մարզ ք. Գյումրի
Ծրագրի տևողությունը	Ծրագրի ընդհանուր տևողությունը 4 ամիս է:
Ծրագրի հակիրճ նկարագիրը	Ծրագրի շրջանակներում ստեղծվելու է մանկատների և խնամքի տների երեխաների և նրանց ընտանիքի անդամների շրջանում «հակակոռուպցիոն և երեխաների իրավունքների պաշտպանության կենտրոն»: Ստեղծել 10 հոգանոց մոնիթորինգային հասարակական խումբ և իրականացնել մոնիթորինգային այցելություններ Գյումրի քաղաքում գործող հատուկ խնամքի 3 /շոքր/ և 1/մեկ/ մանակտուն:
Ծրագրի բյուջեն (նշել դրամով)	1.499.650 ՀՀ դրամ
Ծրագրի գործընկեր կազմակերպությունը (եթե առկա է)	««ՈւԻԽ» Իրավաբանական Կլինիկա» ՀԿ, «Արաքս Կենտրոն» Բարեգործական ՀԿ

Դիմող կազմակերպության/ների նկարագրություն (առավելագույնը կես էջ)

«ԼոգոՍ» Երիտասարդական ՀԿ-ն հիմնադրվել է 2013թ հոտկեմբերի 21: Կազմակերպության առաքելությունն է՝ իրականացնել բազմաբնույթ ծրագրեր և միջոցառումներ, որոնք նպատակաուղղված են հասարակության հիմնախնդիրների լուծմանը: Մեր կազմակերպությունը գործում է ՀՀ Շիրակի մարզ ք. Գյումրիում և գործունեություն է ծավալում ՀՀ-ում ՀՀ սահմաններից դուրս: Կազմակերպությունը ունի ղեկավարման խորհուրդ՝ բաղկացած 5 անձանցից, խորհրդակցական խորհուրդ՝ 11 անձանցից, 14 հոգանոց աշխատակազմ, 72 կամավոր: Կամակերպությունը իրականացնում է իր գործունեությունը ելնելով ռազմավարական նպատակ խնդիրներից: Մինչ օրս ՀԿ-ի կողմից իրականացվել են հետևյալ ծրագրերը՝ «Իրազեկությունը՝ անվտանգ կյանքի երաշխիք», «Երկիրը մեր տունն է» բնապահպանական ծրագիր, «Հեծանվով դեպի մշակույթ», «Հետիոտների շահերի պաշտպանությունը որպես անվտանգ կյանքի երաշխիք» ծրագրի, «ՀԿ ները և հարկային դաշտը» երկամսյա հաշվապահական դասընթաց: «Ծխախոտի կանխարգելումը հասարակական տրանսպորտում» ծրագիր, «Վերածնունդ» երաժիշտ-կատարողների 6-րդ և 7-րդ միջազգային մրցույթ փառատոնի շրջանակներում ՀԿ-ն հանդիսանում է ծրագրի մշակութային ծրագրի հովանավոր: «ԼոգոՍ» Երիտասարդական ՀԿ-ի կողմից ներկայացվող ծրագիրը համապատասխանում է կազմակերպության 2015-2018թթ ռազմավարական հետևյալ նպատակներին՝ 4.2 Խոշտանգումների կանխարգելում: Մարդու իրավունքների պաշտպանությունը փակ և կիսափակ հաստատություններում (ուստիկանություն, քրեակատարողական հիմնարկներ, զինված ուժեր, մանկատներ, գիշերօթիկներ և հատուկ խնամքի հաստատություններ), և 4.3 Երեխաների իրավունքների պաշտպանություն: **Իրավաբանական կլինիկան հիմնադրվել է 2003թ.-ին՝** Ամերիկյան իրավաբանների աջակցությամբ: 2004թ.-ին ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցվել է որպես իրավաբանական անձ՝ Հասարակական կազմակերպության կարգավիճակով: Կլինիկայի նպատակն է՝ զարգացնել իրավաբան-ուսանողների գիտելիքները և գործնական հմտությունները, աջակցել ուսանողներին ճիշտ պատկերացնել իրավաբանի մասնագիտության դերն ու նշանակությունը և անվճար իրավաբանական օգնություն ցույց տալ սոցիալապես անապահով քաղաքացիներին և կազմակերպել իրավապաշտպան գործունեություն: Կլինիկայում աշխատում են հմուտ փաստաբաններ և իրավաբան դասախոսներ՝ վերապատրաստված ԱՄՆ-ում, Սանկ-Պետերբուրգում, Ստրասբուրգում,

Լեհաստանում, Վրաստանում և տասնհինգ ուսանող-խորհրդատու ու հինգ կամավոր: 2007-2010թթ. Կլինիկան դասընթացներ է կազմակերպել խորհրդատվություն մատուցել նաև ընտանեկան և աշխատանքային իրավունքի ոլորտում՝ կապված նոր աշխատաքային օրենսգրքի դրույթների լուսաբանման հետ: 2008թ-ից Կլինիկան համագործակցում է ՄԱԿԳՀ-ի գրասենյակի հետ՝ իրականացնելով «Փախստականների և ապաստանի իրավունք» ծրագիրը: 2005-2012թթ. Կլինիկան իրականացրել է նաև «Շրջիկ կլինիկա» ծրագիրը, որի արդյունքում իրականացրել է «Իրավագիտակցության մակարդակը դպրոցներում» մոնիթորինգը, մատուցել է խորհրդատվություն ինչպես նաև սեմինարներ է կազմակերպել Շիրակի մարզի թվով 42 համայնքներում և դպրոցներում: 2013թ.-ին Կլինիկան իրականացրել է Նորվեգական կառավարության կողմից հայտարարված «Իրավունք բոլորի համար» ծրագիրը՝ Շիրակի մարզի Աշոցք և Ամասիա համայնքներում: 2013-2015թթ. Կլինիկական կրթությունը և խորհրդատվությունը նպատակաուղղված է եղել «Մարդու իրավունքների» հետ կապված խնդիրների լուծմանը: Վերջերս քաղաքացի Ս. Թորոսյանի անունից Կլինիկայի ուսանողների կողմից գրված դիմումով հակասահմանադրական ճանաչվեց քրեական գործերով միայն փաստաբանի կողմից վճռաբեկ բողոք բերելու դրույթը: Կլինիկան համագործակցում է տարբեր իրավապաշտպան կառույցների հետ և հարուստ փորձ ունի սեմինարների, կլոր-սեղանների, մոնիթորինգային այցերի, ինչպես նաև դատախազների կազմակերպման ոլորտում: **«Արաքս Կենտրոն» Բարեգործական ՀԿ-ն հիմնադրվել է 15 մարտի 2005թ.** Կազմակերպության առաքելությունն է՝ Պաշտաանել հասարակության անդամների խոցելի խմբերի շահերը, իրավունքները՝ ինտեգրելով հասարակական ակտիվ կյանքի: Կազմակերպությունը իրականացրել է հետևյալ ծրագրերը՝ «Չոր սնունդ» անապահով տարեցների համար, «Հաշմանդամների շահերի պաշտպանություն Արթիկ, Մարալիկ», «Կանայք և իրենց իրավունքները», «Արթիկի տարեցների և հաշմանդամների համայնքային կենտրոն», «Առաքելական եկեղեցին և կրոնը, որպես քրիստոնյաների հիմնաքար», «Կամավորական աշխատանքների ուսուցում» Շիրակի մարզի և Գյումրիի դպրոցներում, «Միջսերնդային աշխատանքներ»-ի փորձի փոխանակում Կանադայում CESCO/2006, «Ֆինանսների հայթայթման» ծրագիր, «Ստրատեգիական պլանի մշակում», «Տարեցների դերը քաղաքացիական հասարակության մեջ», «Կարիտաս» միջազգային կազմակերպության սոց.աշխատողների, բուժաշխատողների, կամավորների վերապատրաստման «Տարեցների տնային խնամք» սեմինար-դասընթացներ /2004/, «Երեք ընտրական սերունդ», «Հանդիպման ակումբ» Գյումրու միայնակ տարեցների համար ծրագրի:

Ծրագրի նկարագրություն (առավելագույնը երկու էջ)

(Խնդրում ենք ներկայացնել խնդրի համառոտ վերլուծությունը, նկարագրել ծրագրի նպատակները և ինչպե՞ս էք նախատեսում հասնել այդ նպատակներին: Նշեք, ովքե՞ր են ծրագրի ուղղակի և անուղղակի շահառուները, ինչ մեթոդաբանություն է կիրառվելու, և որո՞նք են ակնկալվող արդյունքները և ազդեցությունը):

Հայաստանի Հանրապետությունը 1992թ. վավերացրեց Երեխաների իրավունքների մասին կոնվենցիան: 1996թ.ին ՀՀ-ն ընդունեց «Երեխայի իրավունքների մասին» օրենքը, որը, սակայն, կրկնում է կոնվենցիայի դրույթները և կրում է խիստ դեկլարատիվ բնույթ՝ առանց բավարար կիրառման: ՀՀ-ում երեխաների պաշտպանության համակարգը դեռևս լիովին կայացած չէ, ունի ռեսուրսների լուրջ պակաս: Հատկապես մեծ ուշադրության կարիք են զգում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաները: ՀՀ հատուկ խնամքի տնեքում և մանկատներում ապրող երեխաների իրավիճակի վերաբերյալ անկախ և շարունակական մոնիթորինգ չի իրականացվում: Հրատապ դեպքերում կատարված հետազոտությունները և մոնիթորինգն իրականացվում է բացառապես այն ժամանակ, երբ բռնության, չարաշահման, կոռուպցիոն դրսևորման կամ երեխայի մահվան դեպքի մասին հանրությունը իրագեկ է դառնում: Հաստատություններում երեխաների տեղավորման պատճառների վերաբերյալ գնահատումը հաճախ անտեսում է երեխայի շահերը հաշվի առնելու սկզբունքը: ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՄԵՖ) ուսումնասիրությունը փաստում է, որ երկրի մոտ 40 խնամքի հաստատություններում (մանկատներ, ցերեկային խնամքի կենտրոններ, գիշերօթիկ հատուկ դպրոցներ) ապաստանած շուրջ 4000 երեխաների 80 տոկոսն ունի առնվազն մեկ ծնող և նրանց հիմնական մասը հաստատություններում են հայտնվել սոցիալական խնդիրների պատճառով: ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետազոտությունը փաստում է, որ կառավարությունը մանկատան կամ հատուկ հաստատությունների ամեն մի երեխայի համար միջինը տարեկան ծախսում է 4000 դոլար, մինչդեռ խնամատար ընտանիքում ապրելու դեպքում այդ ծախսը կկրճատվի մինչև 2500 դոլար, ու պետությունը կկարողանա տարեկան 1,8

մին դուրս տնտեսել: Բայց քանի դեռ այդ օղակում շահագրգիռ մարդիկ կան, ապա այս գործընթացն առաջ չի շարժվի, դա հանդիսանում է կոռուպցիայի աղբյուր և պարզ չէ, թե պետության տրված գումարի քանի՝ տոկոսն է երեխայի վրա ծախսվում: ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի ստուգումները հաստատեցին՝ պարզելով, որ մանկատներում պետական գումարների միտումը բավական մեծ չափերի է, որոշ ապրանքներ գնվել են շուկայական գներից մոտ 200 տոկոսով բարձր, և գումարների զգալի մասը չի ծառայել իրենց նպատակին: Այս ոլորտը ունի լիարժեք և օբյեկտիվ մոնիթորինգի և ուսումնասիրության կարիք: Ելնելով ժողովրդավարության սկզբունքներից՝ պետությունը պարտավորվել է երեխաների իրավունքների իրագործման ու վերահսկման գործընթացներին մասնակից դարձնել հանրությանը: Հիմք ընդունելով վերը թվարկված փաստերը՝ «ԼոգոՍ» ԵՀԿ-ն առաջարկում է «Գյումրու հատուկ խնամքի տների և մանկատների շրջանում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման, երեխաների և նրանց ծնողների շահերի և իրավունքների պաշտպանության» ծրագիր: Ծրագրի նպատակն է՝ Նպաստել Գյումրու հատուկ խնամքի տների և մանկատների շրջանում կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը, ինչպես նաև երեխաների շահերի և իրավունքների պաշտպանության մեխանիզմների ստեղծմանը և տարածմանը:

Ծրագրի խնդիրներն են

- Ստեղծել մանկատների և խնամքի տների երեխաների և նրանց ընտանիքի անդամների շրջանում «Հակակոռուպցիոն և երեխաների իրավունքների պաշտպանության կենտրոն»: Կենտրոնն ունենալու է իր պաշտոնական կայք էջը, որի միջոցով լուսաբանվելու է կենտրոնի կողմից իրականացվող մոնիթորինգային այցերի ընթացքը, արդյունքները, ինչպես նաև կենտրոնի կողմից ցուցաբերվող աջակցությունը: Կենտրոնի կայք էջ՝ accrhc.am (Anti-corruption and Children Rights Protection Center): Կենտրոնում կստեղծվի արագ արձագանքման թեժ գծի (թեժ գծի համար օգտագործվելու է «ԼոգոՍ» ԵՀԿ-ի քաղաքային (+374; 312) 53330 հեռախոսահամարը):
- Ձևավորել Շիրակի մարզում գործող մոնիթորինգային կարողություններով և շահերի ու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություններից, «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի Շիրակի մարզի հակակոռուպցիոն կոալիցիայից 10 հոգանոց հասարակական մոնիթորինգային խումբ: Մոնիթորինգային խմբի 10 անդամների համար կազմակերպվել 2 օրյա վերապատրաստման դասընթաց հատուկ խնամքի և մանկատների երեխաների և նրանց ծնողների իրավունքների տեղական և միջազգային օրենսդրական ակտերի, կոռուպցիա և կաշառակերություն հասկացությունների, դրանց տարբերությունների, մոնիթորինգի հիմնական առանձնահատկությունների, իրականացման մեթոդաբանության, գեկույցի պատրաստման առանձնահատկությունների վերաբերյալ:
- Մանկատների և հատուկ խնամքի տների երեխաների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների իրազեկման թուղթիկների տպագրություն: (Թուղթիկներում ներկայացվելու է ծրագիրը, ֆինանսավորողի, իրականացնողի մասին, ներկայացվելու է վերջիններիս իրավունքները, նշվա է լինելու կայք էջը, որի միջոցով շահառուները կկարողանան իրենց իրավունքների և պարտականությունների մասին ստանալ լիարժեք տեղեկատվություն, ինչպես նաև նշված է լինելու արագ արձագանքման թեժ գծի հեռախոսահամարը):
- Իրականացնել մոնիթորինգային այցելություններ Գյումրի քաղաքում գործող Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական աջակցության կենտրոն ՊՈԱԿ, «Թռչունյաց տուն» մանկատուն, Ֆ. Նանսենի անվան գիշերօթիկ /Հույս մանկատուն/, «Երեխաների տուն» հաստատություններ և ընտանիքներ: 3 ամիսների թընթացքում մոնիթորինգային այցեր իրականացնել յուրաքանչյուր հաստատություն 4 անգամ: Մոնիթորինգային այցեր իրականացնել նաև մանկատների և հատուկ խնամքի տների երեխաների ընտանիքներ: Ընդհանուր թվով 20 ընտանիք: Մոնիթորինգային այցելությունների իրականացման հիմնական ուղղություններն են՝
 1. Երեխաների առողջության պահպանման իրավունք/ ԵԻԿ, հոդված 5, ՀՀ օրենք «Երեխայի իրավունքների մասին», հոդված 7/,
 2. Երեխաների ծնողներին ճանաչելու և ընտանիքի հետ կապ պահպանելու իրավունք / ԵԻԿ, հոդված 7, կետ 1, հոդված 8 կետ 1/,
 3. Երեխայի բոնությունից պաշտպանության իրավունք/ ԵԻԿ, հոդված 19, ՀՀ օրենք «Երեխայի իրավունքների մասին», հոդված 9/,
 4. Երեխայի կրթության և զարգացման իրավունք / ԵԻԿ, հոդված 28, 29, 31, ՀՀ օրենք «Երեխայի իրավունքների մասին», հոդված 11, 18 /,

5. Երեխայի անձնական կյանքի գաղտնիության իրավունք / ԵԻԿ, հոդված 16, ՀՀ օրենք «Երեխայի իրավունքների մասին», հոդված 5/:
6. Ծնող-հաստատություն-երեխա փոխհարաբերություններում առկա կոռուպցիոն դրսևորումներ:

Ծրագրի թիրախի խումբ՝ ՀՀ Աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարությունը, ՀՀ Շիրակի մարզպետարանը, Գյումրի քաղաքի Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական աջակցության կենտրոն ՊՈԱԿ, «Թռչունյաց տուն» մանկատուն, Ֆ. Նանսենի անվան գիշերօթիկ /Հույս մանկատուն/, «Երեխաների տուն» հաստատությունները:

Ծրագրի շահառուներ՝ հետազոտության մեջ ընդգրկված հաստատությունների ընդհանուր թվով 400 երեխաներ, նրանց սպասարկող վարչական, մասնագիտական, դաստիարակչական և խնամատարական աշխատակազմի մեջ ընդգրկված 100 աշխատող, 20 ընտանիք, վարչական անձնակազմի 10 ներկայացուցիչներ /հիմնականում տնօրենների կամ փոխտնօրենների/, աշխատակազմի 50 անդամներ՝ սոցիալական աշխատողներ, հոգեբաններ, ուսուցիչներ, դաստիարակներ, դայակներ, խոհանոցի աշխատողներ:

Մոնիթորինգային այցերից հետո կկատարվի մշտադիտարկման արդյունքների հավաքագրում, որի արդյունքում կմշակվի արդյունքներն ամփոփող գեկույց: Ձեկույցը ավելի լայն կիրարկում ստանալու նպատակառվ թարգմանվելու է նաև անգլերեն: Ծրագրի ավարտին կկատարվի գեկույցի շնորհանդես և ծրագրի արդյունքների ամփոփում:

Ակնկալվող արդյունքներ՝ Սույն ծրագիրը հանդիսանում է պիլոտային և հաջողության պարագայում այն հնարավոր կլինի կիրառել ՀՀ բոլոր մանկատների և հատուկ խնամքի տների շրջանում: Հնարավոր կլինի նաև ներգրավվել այլ հաստատություններ (գիշերօթիկներ, ցերեկային դպրոցներ): Ծրագրի լավագույն արդյունք կհանդիսանա ստեղծված կենտրոնը, որը իր գործունեությունը կշարունակի ծրագրի ավարտից հետո: Կենտրոնը կլինի մարզում միակ կառույցը, որը շարունակաբար կգրադվի մանկատան և հատուկ խնամքի տների երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությամբ, ինչպես նաև կհանդիսանան հաստատությունների շրջանում կոռուպցիոն ռիսկերի բացահայտման և նվազեցման կոնկրետ մոխանիզմ: Ստեղծված կայք էջը, կապահովի կենտրոնի աշխատանքների լուսաբանում, ինչպես նաև կապահովի հանրային վերահսկողություն հատուկ խնամքի և մանկատների շրջանում: Ստեղծված արագ արձագանքման թեժ գծի օգնությամբ հաստատությունների երեխաները և նրանց ընտանիքը անդամները կդառնան անուղղակի մոնիթորինգ իրականացնողներ: Թեժ գիծը հնարավորություն կտա զանգերի միջոցով տեղեկություն ստանալ հաստատություններում առկա իրավիճակի, երեխաների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների և շահերի պաշտպանվածության, ինչպես նաև ծնող-հաստատություն-երեխա փոխհարաբերություններում հնարավոր կոռուպցիոն դրսևորումները:

Հրատարակված իրազեկման թոուցիկների միջոցով կապահովվի ծրագրի տեսանելիությունը, ինչպես նաև երեխաները և նրանց ընտանիքի անդամների շրջանում կրթարձանա իրազեկության մակարդակը, իրենց իրավունքների վերաբերյալ: Մոնիթորինգային խմբի կողմից կատարված այցելությունների արդյունքում վեր կհանվի հաստատությունների ներքին իրավիճակի, երեխաների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների և շահերի պաշտպանվածության, երեխաների հանդեպ մանկավարժական անձնակազմի և խնամակալների վերաբերմունքի, ինչպես նաև ծնող-հաստատություն-երեխա հարաբերություններում առկա հնարավոր կոռուպցիոն դրսևորումների պատկերը, որն իր հերթին կնպաստի կառույցների հաշվետվողականության բարձրացմանը:

Ժամանակացույց

(Խնդրում ենք ներկայացնել ծրագրի ժամանակացույցը՝ հետևելով առաջարկվող աղյուսակին: Անհրաժեշտության դեպքում կարող եք ավելացնել լրացուցիչ տողեր:)

Շաբաթ	Գործողություն
01.05-10.05	Պայմանագրերի/համաձայնագրերի կազմում և կնքում աշխատակազմի հետ
01.05-31.08	Ծրագրի վերաբերյալ տեղեկատվության տարածում (սոց. ցանցեր, էլեկտրոնային լրատվամիջոցներ, տպագիր մամուլ)
01.05-10.05	Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նյութերի և գրենական պիտույքների ձեռքբերում

01.05-15.05	Վերահսկման և գնահատման թերթիկների կազմում
01.05- 08.05	Դասընթացավարների ընտրություն
01.05- 08.05	Աշխատանքային ժամանակացույցի կազմում
15.05-22.05	Ծրագրի շնորհանդես
15.05-22.05	«Հատուկ խնամքի և հատուկ դպրոցների երեխաների ծնողների շահերի և իրավունքների պաշտպանության և աջակցության կենտրոնի հիմնում
15.05-22.05	Կենտրոնի գործունեությունը լուսաբանող կայքի ստեղծում
15.05-22.05	Անկախ մոնիթորինգային խմբի ձևավորում Շիրակի մարզում գործող իրավապաշտպան կազմակերպությունների անդամներից բաղկացած
18.05-29.05	2-օրյա դասընթաց մոնիթորինգային խմբի անդամների համար
18.05-29.05	Իրազեկման թերթիկների (թռուցիկների) տպագրություն
18.05-29.05	Մոնիթորինգային այցելությունների ժամանակացույցի մշակում
18.05-29.05	Թեժ գծի ստեղծում
18.05-17.08	Մոնիթորինգային թվով 15 այցեր Գյումրու երեխաների սոց.աջակցության կենտրոն ՊՈԱԿ, <Թոչունյաց Տուն> մանկատուն, Ֆ.Նանսենի անվան գիշերօթիկ , <Երեխաների տուն>
18.05-17.08	Մոնիթորինգի արդյունքների հավաքագրում
18.05-21.08	Մշտադիտարկման արդյունքներն ամփոփող զեկույցի մշակում և հրատարակում, թարգմանություն անգլերեն լեզվով
01.05-31.08	Ծրագրի ընթացի գնահատում
18.05-21.08	Ծրագրի արդյունքների ամփոփում, զեկույցի շնորհանդես
24.08-31.08	Ծրագրի մշտադիտարկում, գնահատում և վերհսկում
24.08-31.08	Ֆինանսական և ծրագրային հաշվետվությունների պատրաստում
24.08-31.08	Վերջնական գնահատում

Բյուջե

(Խնդրում ենք ներկայացնել մանրամասն բյուջե՝ առանձին տողերով՝ ըստ դասակարգումների)

Միավոր	Միավորի համար	Միավորի գին	ՀԵԻԱ-ից պահանջվող գումար	Ներդրման գումար	Ընդհանուր
1. Աշխատակազմ (ծրագրի աշխատակազմ աշխատավարձ և փորձագետների հոնորարներ՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերն ու պարտադիր վճարները)					
1.1 Ծրագրի ղեկավար	1 անգամ	120.000	120.000	-	120.000
1.2 Ծրագրի համակարգող	1 անգամ	120.000	120.000	-	120.000
1.3 Ծրագրի հաշվապահ	1 անգամ	90.000	90.000	-	90.000
1.4 Փորձագետ (մոնիթորինգի ամփոփիչ զեկույցի մշակում)- դասընթացավար	1 անգամ	120.000	120.000	-	120.000
1.5 Դասընթացավար	1 անգամ	75.000	75.000	-	75.000
1.6 Ծրագրի իրավաբան	1 անգամ	100.000	100.000	-	100.000
1.7 Կայքի ադմինիստրատոր	1 անգամ	65.000	65.000	-	65.000
1.8 Թարգմանիչ (Ամփոփիչ զեկույցը անգլերեն լեզվով թարգմանելու համար)	1 անգամ	70.000	70.000	-	70.000
			760.000	-	760.000
2. Ճանապարհածախս (միայն տաքսի ծառայության վճար)					
Տրանսպորտային ծախս (15 այց 5 անձ այցելություններ մանկատներ)	15 անգամ	1500	22.500		22.500
3. Գրասենյակային պարագաներ					
3.1 Թուղթ	10 տուփ	2500	25.000	-	25.000
3.2 Գրիչ (2-օրյա դասընթացի մասնակիցների համար)	12 հատ	100	1.200	-	1.200
3.3 Նոթատետր (2-օրյա դասընթացի մասնակիցների համար)	12 հատ	200	2.400	-	2.400
3.3 Թղթապանակ (2-օրյա դասընթացի մասնակիցների համար)	12 հատ	150	1.800	-	1.800
3.4 Աշխատանքային բլոկնոտ մոնիթորինգային խմբի անդամների համար	12 հատ	1200	14.400	-	14.400
4. Հրապարակումներ					
4.1 Մոնիթորինգային ամփոփիչ զեկույցի հրատարակում	100 օրինակ	1000	100.000	-	100.000

4.2 Թռուցիկի տպագրություն	1000 օրինակ	20	200.000		200.000
5. Այլ ուղղակի ծախսեր					
5.1 Ծրագրի վերաբերյալ ցուցանակ (բաններ)	1 հատ	18.000	18.000	-	18.000
5.2 Սուրճի ընդմիջում (2-օրյա դասընթացների ընթացքում, 15 անձի համար, յուրաքանչյուր անձին 1000 ՀՀ դրամ)	2 անգամ	15.000	30.000	-	30.000
5.3 Ջուր (ծրագրի շնորհանդեսի համար)	20	150	3.000	-	3.000
5.4 Հանքային Ջուր (ծրագրի շնորհանդեսի համար)	20	170	3.400	-	3.400
5.5 Բաժակ (ծրագրի շնորհանդեսի համար)	100	10	1.000	-	1.000
5.7 Տպիչի քարթրիջի լիցքավորում	2 անգամ	4500	9.000	-	9.000
5.8 Ծրագրի օգնական	1 անգամ	75.000	-	75.000	75.000
5.9 Ծրագրի Մոնիթորինգի և գնահատման անկախ փորձագետ	1 անգամ	120.000	-	120.000	120.000
5.10 Գրասենյակի վարձակալություն	4 ամիս	45.000	-	180.000	180.000
5.11 Էլեկտրաէներգիայի վարձավճար	4 ամիս	5000	-	20.000	20.000
5.12 Գազի վարձավճար	4 ամիս	4500	-	18.000	18.000
5.13 Հեռախոսի վարձավճար	4 ամիս	1200	-	4.800	4.800
5.14 Ինտերնետի վարձավճար	4 ամիս	6000	-	24.000	24.000
5.15 Պրոյեկտորի վարձակալություն	12 ժամ	2000	24.000		24.000
5.16 Համակարգիչ (AICROC H61)	4 ամիս	15000	-	60.000	60.000
5.17 Դյուրակիր համակարգիչ HP Pavilion	4 ամիս	20000	-	80.000	80.000
5.18 Տպիչ Canon 3110	4 ամիս	15000	-	60.000	60.000
5.19 Տպիչ HP 7100 (գունավոր)	4 ամիս	20000	-	80.000	80.000
5.20 Բեյջեր (մասնակիցների և աշխատակազմի համար), տպագրություն+լամինացիա	15 հատ	250	3.750	-	3.750
5.21 Վկայականների տպագրություն (դասընթացի մասնակիցների համար)	12	350	4.200	-	4.200
5.22 Տարածքի վարձակալություն սեմինար դասընթացի համար	2 օր	50.000	-	50.000	50.000
5.23 Հյուրասիրություն 50 անձի համար (ծրագրի ամփոփում, զեկույցի շնորհանդես)	1 անգամ	50.000	50.000	-	50.000
5.24 Կենտրոնի գործունեությունը	1 անգամ	120000	100.000	20.000	120.000

լուսաբանող կայքի ստեղծում					
5.25 Կայքի դոմեն	1 անգամ	12000	12.000	-	12000
5.26 Կայքի հոսթինգ	12 ամիս	2000	24.000	-	24000
5.27 Օրապահիկ դիտորդական խմբի մասնակիցների համար մոնիթորինգային այցերի ընթացքում (15 այց, յուրաքանչյուր այցի ժամանակ 5 անձ)	75 անգամ	1200	90.000	-	90000
6. Ընդհանուր ուղղակի ծախսեր (տողեր 1-5)					
Ընդամենը			1.499.650	791.800	2.291.450

Այլ տեղեկատվություն

Այլ կազմակերպություններ, որոնց ներկայացրել եք սույն ծրագիրը և ձեր դիմումի կարգավիճակը

«ԼոգոՍ» Երիտասարդական ՀԿ հիմնական հայտատու, ««ՈւԻԽ» Իրավաբանական Կլինիկա» ՀԿ գործընկեր, «Արաքս Կենտրոն» Բարեգործական ՀԿ գործընկեր:

«ԼոգոՍ» Երիտասարդական
ՀԿ Նախագահ



Արա Մեիքջանյան

09 ապրիլի 2015թ